

**ՕԴԱՆԱՎԻ ԹՈՒՉՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**  
**PERMIT TO FLY GUIDANCE**

ԵՐԵՎԱՆ 2015

ՔԱԳՎ-ն տրամադրում է թռիչքի թույլտվություն այն պայմանով, որ օդանավը կարող է իրականացնել անվտանգ թռիչք հետևյալ նպատակներով.

- ա) օդանավի տեղափոխում բազա, որտեղ պետք է իրականացվեն վերանորոգումներ, մոդիֆիկացիաներ կամ տեխնիկական սպասարկում կամ տեղափոխում օդանավի պահպանման վայր;
- բ) օդանավի ներմուծում կամ արտահանում;
- գ) օդանավի տարհանում տարածքից, որտեղ վտանգ է սպառնում կամ ֆորս-մաժորային պայմանների առկայության դեպքում, կամ
- դ) ցանկացած այլ դեպքերում ԹՊՎ որոշմամբ.

Օդանավ շահագործողի/սեփականատիրոջ կողմից ներկայացվող Թռիչքի թույլտվության հայտը ընդգրկում է հետևյալ տեղեկատվությունը.

- ա) օդանավի գրանցված սեփականատիրոջ անունը (անվանումը) և հասցեն;
- բ) օդանավի սերիան, մոդելը, գործարանային համարը և ազգային ու գրանցման նիշերը;
- գ) թռիչքի նպատակը;
- դ) առաջարկվող թռիչքի պլանը;
- ե) տեղեկատվություն օդանավի կառավարման համար անհրաժեշտ անձնակազմի վերաբերյալ;
- զ) մանրամասն նկարագրություն թռիչքային պիտանիությանը ներկայացվող պահանջների մասով շեղումների մասին;
- է) որևէ սահմանափակումներ, որոնք դիմողը գտնում է անհրաժեշտ օդանավի անվտանգ շահագործման համար;
- ը) ցանկացած այլ տեղեկատվություն, որը ԹՊՎ-ն գտնում է անհրաժեշտ շահագործողական սահմանափակումների որոշման համար:

Քանի որ թռիչքի թույլտվությունը տրվում է օդանավին, որը կարող է չհամապատասխանել ՔԱԳՎ կողմից սահմանված թռիչքային պիտանիության չափանիշներին, ապա մտցվում են հատուկ սահմանափակումներ՝ անձանց կամ ունեցվածքի նկատմամբ ռիսկերի նվազեցման նպատակով:

ՔԱԳՎ կողմից այդ սահմանափակումների որոշման համար հայտատուն իրականացնում է համապատասխան ստուգումներ կամ փորձարկումներ: Հատուկ թռիչքների բոլոր տեսակի թույլտվությունների համար պարտադիր են հետևյալ պայմանները.

- ա) թույլտվության պատճենը պետք է գտնվի օդանավում, տեսանելի տեղում՝ տրված թույլտվության պայմանների համաձայն իրականացվող ողջ թռիչքի ընթացքում;
- բ) օդանավին տրված գրանցման նիշերը պետք է օդանավի վրա նշագծված լինեն համաձայն ՔԱԳՎ պահանջներին, որոնք ներկայացված են ՔԱԳՎ պետի 09.12.2004թ. թիվ 192-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում օդանավերի պետական գրանցման, օդանավերի ռեգիստրի վարման ու թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման կարգ»-ում;
- գ) օդանավում չպետք է գտվեն վճարի դիմաց տեղափոխվող անձինք կամ ունեցվածք;
- դ) ոչ մի անձ չպետք է տեղափոխվի օդանավում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա ներկայությունը անհրաժեշտ է թռիչքի նպատակների համար և նա տեղեկացված է թռիչքի թույլտվության բովանդակության և օդանավի թռիչքային պիտանիության մասին;
- ե) օդանավը պետք է կառավարվի միայն ՔԱԳՎ կողմից տրված կամ ճանաչված համապատասխան վկայականներ կրող անձնակազմի կողմից;
- զ) բոլոր թռիչքները պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետությունում կիրառվող թռիչքային կանոնների համաձայն և այն պետությունների թռիչքային կանոնների համաձայն, որոնց տարածքներով կատարվելու է թռիչքը;
- է) բոլոր թռիչքները պետք է իրականացվեն ինտենսիվ փոխադրումների գոտիներից հեռու և ցանկացած այլ գոտիներից հեռու, որտեղ թռիչքները կարող են վտանգ սպառնալ անձանց կամ ունեցվածքին;
- ը) բոլոր թռիչքները պետք է իրականացվեն շահագործողական սահմանափակումների շրջանակներում՝ օդանավի թռիչքային շահագործման ձեռնարկին համապատասխան և տվյալ թռիչքի նկատմամբ ՔԱԳՎ լրացուցիչ սահմանափակումների համաձայն;
- թ) բոլոր թռիչքները պետք է կատարվեն մինչև թռիչքի թույլտվության գործողության ժամկետի լրանալը:

Եթե թռիչքային պլանում նախատեսվում է օտարերկրյա պետությունների օդային տարածքով թռիչք, ապա օդանավ շահագործողը պարտավոր է ստանալ տվյալ պետությունների լիազոր մարմինների համապատասխան թույլտվությունները մինչև տվյալ թռիչքի իրականացումը: